ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թ. մայիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին 24 ծնող, դասվար Անետ Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմությունը քննարկելու հարցը:
2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Լսեցին

1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմությունը քննարկելու հարցը:

Ելույթ ունեցավ դասվար Անետ Հարությունյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքները:Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը,տեղեկացան թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ և ինչ պետք է անեն ամառային արձակուրդներին,որպեսզի խնդիրները վերանան: Ամփոփվեցին տարեկան գնահատականները, աշակերտների վարքը, վարքային խնդիրները, դրանցից ձերբազատվելու ուղիները:

Որոշեցին

Ամառային արձակուրդներին կատարել տրված հանձնարարությունները,լինել ուշադիր ձեռագրերի նկատմամբ,շատ ժամանակ տրամադրել ընթերցանությանը:

Լսեցին

2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ծնողները խոսեցին էքսկուրսիաների կարևոր նշանակության մասին, որպես աշակերտների հանգիստը կազմակերպելու, հայրենագիտական գիտելիքները հարստացնելու և նրանց միջև միջանձնային հարաբերությունների ձևավորման կարևոր գործիք:
Դասվար Անետ Հարությունյանը առաջարկեց էքսկուրսիան կազմակերպել Կարբիի ձորում և տառերի պուրակում:
Առաջարկը ընդունվեց բոլորի կողմից միաձայն:

Որոշեցին

Հավաքել 3000 դրամ գումար էքսկուրսիան լիարժեք կազմակերպելու, տրանսպորտային ծախսերը հոգալու և սնունդ ձեռք բերելու համար:
Այդ աշխատանքները հանձնարարվեց ծնողկոմիտեի անդամներին: Լինել հետևողական հատկապես տրանսպորտի ապահովության հարցում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Վարդանյան Լիլիթ/
Քարտուղար՝ / Ազարյան Տաթև /